

«ԱՆՆԻԲԱԼԸ ՀՈՌՄԻ ԴՌՆԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ ...»

## ԲԱՆ՝ ՎԱՍՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ, ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Մէկ ամիսէն, ժամանակի տեղութեան վրայ, կը փակուի Հայկական եղեռնի Եօթնասունամեակը: 1985ի արևածագին, Յունուարին, Հայրապետական Կոնգակով Մեր պատգամը ուղղած էինք մեր սիրեցեալ ժողովուրդին: Նոյն այս տարուան մայրամուտին, Դեկտեմբերի առաջին օրը, սրտի պարտք կը զգանք հայրական այս խօսքը ուղղել մեր բոլոր հաւատացեալներուն, անխտիր, մեր բոլոր թեմերուն մէջ:

Ո.

Հոգեկան ցնծութեամբ և հպարտութեան ու զնահատանքի ջերմ զգացումներով վկայ դարձանք այն պայծառ և յուսադրիչ երևոյթին, որ նոր արթնութեամբ կենսանորոգ գիտակցութեամբ և մանաւանդ միահամուռ ու միասնական ջանքերով Հայ ժողովուրդը գիտցաւ արտայայտել իր հաւատարմութիւնը նահատակներու սուրբ կտակին և իր հետեւողութիւնը անոնց լուսազիծ ուղիին: Կը հաւատանք, որ Ապրիլեան նահատակներու երկնաբնակ հոգիները իրենց երանական կայքերուն մէջ հրճուեցան տեսնելով մանաւանդ նոր սերունդի մէջ մտղցօրէն ալիքաւորուող ինքնագիտակցութեան և ինքնիրազօրժման կենսութեանը՝ որպէս նոր աշխարհի, նոր ժամանակներու մէջ նոր ոճով նոյն գոյամարտի ոգին արտայայտող ճանապարհ:

Ականատես եղանք հայովայել և հոգեզուարճ տեսարաններու և մասնակից՝ ներշնչող դէպքերու Անթիլիասի մէջ թէ Պէյրութի: Անձամբ գացինք մինչև Տէր-Ջօր, անցնելով Հալէպէն և վերադառնալով հերոսական Մուսա Տաղի շառաւիղ ու ժառանգորդ Այնճարի գիւղաւանին վրայով: Մօտէն հետեցանք մամուլին և իրազեկ դարձանք Հայաստանի թէ Սփիւռքի մէջ կատարուած ուղեկոչումներուն, կրօնական, ազգային, մշակութային, քաղաքական, երիտասարդական և այլ հանգամանքներով և երեսներով յատկանշուած: Խորապէս ազդուեցանք և տպաւորուեցանք մասնաւորաբար Ուաշինկթընի մէջ վերապրող մեր հայրերուն և մայրերուն ընծայուած այնքան սրտազրաւ և օրինակելի համայնական յարգանքէն, որ վերակենսայնութեան հոսանք մը տարածեց Հիւսիսային Ամերիկայի ողջ տարածքին վրայ, զոհաբանական ապրումներով լիացնելով կեանքը վերապրողաց և պրկելով կամքերը ապրողաց և ապրելեաց...: Տեսանք հայ թէ օտար լեզուով լոյս ընծայուած հատորներ, հատորիկներ, յօդուածներ, յօդուածաշարքեր, նոր հետաքրքրութեանց որպէս զոհացում և զրգիւ միանգամայն: Տեղեկացանք միջազգային ժողովներու մէջ Հայ ժողովուրդի իրաւունքներու հարցին վերաբերձման և դրական այն արձագանգներուն, որոնք շատ աւելի կանուխ և շատ աւելի պերճաբարբառ կերպով պէտք էր հնչէին միջազգային շրջանակներու մէջ որպէս արդարութեան ձայնին հարազատ զօղանջներ:

Այս բոլորը, և դեռ շատ ուրիշներ, յարանման և յարակից երևոյթներ պիտի մնան ժամանակ մը մեր յիշողութեան մէջ, պիտի անցնին պատմութեան տարեգրութեանց էջերուն և պիտի յիշատակուին գալիք սերունդներուն կողմէ:

Այսպես:

Այս բոլորը՝ վասն «գրոց յիշատակի»...

Մօտ օրէն բացուելիք տարին և դեռ գալիք տարիները ինչ բանով տարբեր պիտի ըլլան Եօթանասունամեակէն առաջ եկած ու անցած տարիներէն, Որակային, ոգեկան, ներքին, անձնական թէ հաւաքական մեր գոյակերպին և լինելութեան ընթացքին մէջ ինչ փոփոխութիւններով պիտի արժեւորուի «յորդառատ գնացիւք» կենսաւորուած և իրացած այս տարին:

Ինչպէս սէմֆոնիք-համանուագի մը վերջին մասը կ'ըլլայ զազաթնացումը բոլոր զայն կանխող մասերուն, ինչպէս զմէջը կ'ըլլայ տաճարի մը կառուցեցողուն սլացիկ հանգուցումը ու ներդաշնակութեան խորհուրդով անոնց իմաստաւորումը, ինչպէս մարդիկին համար վազբին վերջին հանգրուանը կ'ըլլայ անոր ճիգերուն գերազանց, վերջագործ աստիճանի խտացումը, այնպէս և այս տարուան 'Եկեկեմբերը պէտք է դառնայ Եօթանասունամեակի մեր ոգեկոշական բոլոր արարքներուն արժանի և արժեքնոյ պատկումը:

Բ.

Այս ուղղութեամբ իմ հայեցողութիւնը այնքան չի սլաքուիր դէպի նոր և շքեղ համաժողովրդական տօնախմբութիւններու կողմը որքան կը սեւեռուի դէպի ներհայեցողական զիտակցութեամբ խորացումը, անձնացումը, իւրացումը Եօթանասունամեակի ոգիին, անոր տարրացումը, ընդհուլումը մեր շարուածքին, կեցածքին, վերաբերումին և զործօնութեան մէջ: Հիմա ժամանակն է որ Եօթանասունամեակի լուսաճաճանշուններու ճառագայթները հաւաքենք և սեւեռենք մեր անձերուն վրայ, մեր գոյութեան թէ՛ անհատական և թէ՛ համայնական երեսներով, այսինքն՝ մեր թէ՛ ԵՍ-ԻՆ և թէ՛ ԵՍ-Ութեմէն վրայ: Աւետարանական պատկերացումով այս տարին

եթէ «աղ» եղաւ մեր համայնական կեանքին, հարկ է որ այդ աղին համը չցնդի տարուան 365րդ օրը:

եթէ «նրագ» եղաւ մեր ոտքերուն առջև, թող «գրուանի տակ» չդրուի տարուան աւարտին:

եթէ «հաց» եղաւ մեր հոգևոր-ազգային սեղանին, պարտ է որ անօթի չմնանք անկէ՝ երբ տարին կը մեկնի դէպի պատմութիւն:

եթէ «քթխմուռ» դարձաւ մեր ապրումներու աշխարհը խմորելու գորութեամբ, անհրաժեշտ է որ անոր խմորելու կարողութիւնը չցամաքի, երբ 1986ը որպէս թիւ սրբուի մեր տարեցոյցին վրայէն:

եթէ «ջուր» եղաւ մեր կեանքի անդաստանին մէջ, հոգևոր-ազգային կանաչութեան նոր ու վառ գոյնը վերակենդանացնելով այնտեղ, թող անոր ոռոգողական ներգործութիւնը մշտադաւ փայլէ երբ այս տարուան ժամանակային գնացքը հասած ըլլայ իր վերջակէտին:

Ահա այսպիսի տրամադրութիւններէ մեկնելով՝ կ'ուզեմ որ Հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն — նահատակներու շառաւիղներուն — մտքի սլաքները ուղղուին իրենց անձերուն ներքին աշխարհներուն վրայ: Իմ ամենաշնորհակալութեամբ է, որ ամէն մէկը ինք իր մէջ նայի և ինք իրեն տայ սա երեք յերեքաւորդ հարցումները:

- Խճ էի Եօթանասունամեակէն առաջ.
- Խճ եղայ Եօթանասունամեակի ընթացքին.
- Խճ պիտի ըլլամ Եօթանասունամեակէն ետքը:

Եւ որպէսզի ինքնահայեցողութեան այդ ճիշդ չտարածուի ու չնօսրանայ աշխարհի երեսներու և եերոյթներու մէջ տարտղնելով, կ'առաջարկեմ որ իւրաքանչիւրը այդ հարցումները սկսուէ

— իր ինքնութեան (identité)

— իր գոյութեան իմաստին (raison d'être), և

— իր առաքելութեան (mission), այսինքն՝ իր գոյութեան նպատակին կէտերուն վրայ:

#### Գ.

Կոսկածէ վեր է. որ կ'ապրինք ինքնութեան օգնական մը յատկապէս սփիւռքեան մեր կենսավիճակին մէջ: Սա հասարակաց տագնապ մըն է բոլորիս համար: Բայց ասկէ աւելին, և մանաւանդ աշխարհի այս օրերու դրուածքին մէջ, արժէքներու շփոթութեան և զէպի մակերեսայնութիւն ու նուազ մարդկայնութիւն գացող հոսանքին մէջ, այդ տագնապը ունի նաեւ և բնականաբար անձնական, անհասկանալի բնոյթ մը: Անշուշտ, բոլորս ալ մարդ ենք, այդ թէ կրն, բոլորս ալ հայ ենք, ուր ալ ըլլանք: Բայց մէկը հայր է, միւսը՝ մայր, մէկը եկեղեցական է, միւսը՝ աշխարհական, մէկը ուսուցիչ է, միւսը՝ մտաւորական, մէկը դրագէտ է, միւսը՝ արուեստագէտ, մէկը վաճառական է, միւսը՝ գործարանատէր, մէկը արհեստաւոր է, միւսը՝ աշխատաւոր, մէկը գործատէր է, միւսը՝ պաշտօնեայ, մէկը տարէց է, միւսը՝ չափահաս, մէկը երիտասարդ է, միւսը՝ պատանի, մէկը այս համայնքին կը պատկանի կամ ոչն համայնքին, մէկը՝ այս քաղաքական կուսակցութեան կամ այս կամ այն մշակութային, բարեախրական, երիտասարդական, մարդական, հայրենակցական միութեան, մէկը հարուստ է, միւսը՝ բարեկեցիկ կամ կարիքաւոր: Եւ դեռ այսպէս տարբեր-տարբեր կեանքի ասպարէզներու և շրջանակներու հանգամանքներ կը գունաւորեն մեր հասարակաց լոյս-ինքնութիւնը՝ հայութիւնը:

Հիմնական հարցն այն է, թէ ո՞վ եմ ես այս բոլոր մարդկաբար ապրելու հանգամանքներուն և հայօրէն լինելութեան գոյակերպին մէջ: Ե՛մ շեշտօրէն, լիովին ու վառօրէն այն՝ ինչ որ եմ անհատապէս, թէ եմ պատահաբար, հարկադրաբար, պատահաբար, պարզապէս բան մը ըլլալու համար, որովհետեւ կարելի չէ բան մը չըլլալ... Հետեաբար, բուն խնդիրը իմ ի՞նչ ըլլալուն, ինչպէ՛ս ըլլալուն մէջ է: Ուրիշ խօսքով՝ ինքնութեան վաւերականութեան հարցն է որ այս օրերուն սուր հանգամանքով կը դրուի, կամ պէ՛տք է որ դրուի, որովհետեւ աշխարհի մէջ տիրող արագ և ազդեցիկ հաղորդակցութիւններու և փոխ-ազդեցութիւններու յարաշարժ և յաճախ որոշադրիչ արտաքին պայմաններուն տակ առհասարակ մեր ինքնութիւնը՝ ուրիշներն են որ կը հազցեն մեզի աւելի քան մենք է որ կը ճշդենք մեր ազատ և անկաշկանդ գաղափար՝ և սեփական տուեալներով ու արժեքափերով:

Նայինք մեր շուրջը:

Մեր կեանքի արտաքին պարունակը այնքան խճողուած աշխարհ մըն է, այնքան յարափոփոխ, զգայարանքներուն վրայ այնքան դիւրաւ և տիրականօրէն ազդող լսողա-տեսողական (audio-visual) միջոցներու ներգործութեան տակ, որ յաճախ կը տարուինք — և աւելի յաճախ՝ անդիտակցօրէն, անուշադրաբար և անհակակշիռ կերպով — հետեւելու աւելի քան ըլլալու, կապկեղու աւելի քան կեցելու, ընդունելու աւելի քան իւրացնելու, այսինքն՝ ընտրողաբար մեր ինքնութեան խառնելու, առանց այդ ինքնութիւնը ազարտելու, խճըճելու և շփոթի ու անորոշութեան վերածելու ինչ որ տեսակ մը ինքնութեան մահ է սովորական մահէն առաջ . . . :

Սփիւռքի մէջ հայ ապրիլը հեշտութեան հետ չի կրնար հաշտուիլ, Կ'ենթադրէ պրկուած ճիգ, շարունակական ինքնաքննութիւն, մշտատե ինքնաբերական զոհողութեամբ, և այս բոլորին հետ բայց բոլորէն աւելի՝ զոհողութեամբ, ի հարկին, կամաւոր զրկանքի յանձնառում։ Հայուն կեանքը հոսանքին հետ սահիլ երթալու գնացք մը չէ։ Այդպէս չեղաւ մեր նահատակներուն համար։ Կրնային իրենք ալ կեանքի սովորական հոսանքին հետ սահիլ երթալ և հետևաբար ապրիլ. բայց հայութիւնն էր որ պիտի վճարէին իբրեւ զին իրենց ապրելուն։ Իրենք նախընտրեցին կշիռքին միւս նժարը — իրենց անհատական կեանքը վճարել որպէս զինը իրենց ազգի հաւաքական կեանքին։

Այսօր պայմանները փոխուած են։ Մեր կեանքը որպէս փրկագին ընծայելու գերազոյն հարկին տակ չենք։ Բայց, չմոռնանք, զոհողութեամբ ոգիին ժառանգորդներն ենք և չենք կրնար մեր ժառանգը կորսնցնել։ Որովհետեւ այդ պարագային, մեր թշնամին հասած կ'ըլլայ իր նպատակին և մեր նահատակները վերածուած կ'ըլլան ճնջեցեալներու . . . : Սրբապօրութիւն է այդ։ Մեր հայրերը շատ սխալներ գործած կրնան ըլլալ, բայց այս մահացու սխալը չեն գործած։ Եթէ գործած ըլլային՝ մենք այսօր ապրող ազգ մը պիտի չըլլայինք . . . : Անոնք իրենց արեան մէջ, իրենց գոյութեան տարրերուն մէջ խառնած էին այն հաւատքը, որ կը բխի Քրիստոսի կենսապարզ և սա խօսքերէն. —

«Եթէ մէկը կ'ուզէ ինծի հետեւիլ՝ քող իր անձը ուրանայ եւ իր խաչը ամէն օր առնէ եւ իմ հետէս քալէ։ Որովհետեւ ան օր կ'ուզէ իր անձը ապրեցնել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ան օր ինծի համար իր անձը կորսնցնէ, զայն ապրեցուցած պիտի ըլլայ» (Ղկս., Թ. 23-24)։

Ինչպէս առանց խաչի քրիստոնէութիւն չկայ, այդպէս և, ու առաւել ևս, առանց խաչի հայութիւն չկայ։ Ան որ ինք իրմով, ինք իրեն համար կ'ապրի, խոտին պէս պիտի երթայ։ Բայց ան որ իր կեանքը իր անհատական անձէն անդին՝ Աստուծոյ և Ազգին հետ և անոնց համար կ'ապրի, անոնց հետ իր անձը շաղախելով, ինքզինք ապրեցուցած կ'ըլլայ յաւերժութեան շունչով։

Սա՛ է Քրիստոսի ճշմարտութիւնը, եւ ոչ ոք կրնայ ստուեր բերել այս ճշմարտութեան վրայ։

Սա՛ եղաւ նաև հայութեան ճշմարտութիւնը։ Մեր նահատակները տուին այդ ճշմարտութեան վերջին ու անհերքելի ապացոյցը, ինչպէս տուած էին իրենց հայրերը դարերու ընթացքին։

Մա՛ է ճշմարտութիւնը նաև այսօր. և պիտի ըլլայ նաև վա՛ղը: Ժշմարտութիւնը, սակայն, ոչ երէկ ունի, ոչ այսօր և ոչ ալ վաղը: Անոնց մէջէն կ'արտայայտուի, անոնց բանուածքին մէջ կը մարմնանայ, բայց անոնցմով չի նուաճուիր, զանոնք կ'անդրանցնի: Ժշմարտութիւնը յաւիտենական է: Ժշմարտութիւնն է որ կը փրկէ — «Ճեմարտութիւնն ազատեցէ զձեզ» (Յովհ. Ը. 32), Առաքելական յատակ ուսուցումն այն է, որ մենք որեւէ ձեռով չենք կրնար ճշմարտութեան հակառակ երթալ եթէ մարդ ենք և մանաւանդ՝ քրիստոնեայ: Ժշմարտութեան վերակացուներն ենք և հրաւիրուած ենք հսկելու որ մեր ոտքերը չշեղին ճշմարտութեան ուղիէն. «Ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճեմարտութեան, այլ վերակացու եմք ճեմարտութեան» (Ի. Կորնթ., ԺԳ. 8):

Ըսուած է որ մարդ երկու անգամ կը ծնի: Առաջին անգամ ծնած կ'ըլլայ երբ իր մօր արգանդէն աշխարհի լոյսին կը բացուի. եւ երկրորդ անգամ կը ծնի երբ կը գիտակցի թէ ինչո՞ւ ծնած է ...:

Ահա թէ ինչո՞ւ մարդուն կեանքին մարդկային հարգազուգուած լինելու արդիւնքն է առաւելութեան իր գաղափարին և անոր իրազորութեան իր ճիգին: Ըլլալ կայ և ըլլալ կայ: Չըլլանք որովհետեւ եղած ենք: Ըլլանք որովհետեւ կ'ուզենք ըլլալ և ըլլալով՝ իմաստ մը, գոյն մը տալ մեր պարզապէս գոյ ըլլալուն: Չըլլանք այսօր, սա պահուն, վաղը կամ ուրիշ պահերու չըլլալու պէս բան մը ըլլալու համար ...: Ըլլանք վառ գոյնով, ըլլանք համով-հոտով, ըլլանք ըլլալու արեւան ոճով և ոչ թէ լուսնային կամ աստեղային կրաւորականութեամբ, կիսադոյն, մեղկատեսիլ և ընկալառու: Երբ մարդիկ մեզ դիտեն՝ թող իրենց աչքերը թարթեն կամ սեւեւեն և ոչ թէ չտեսնելու պէս հայեացք մը ձգեն և ստուերի պէս քաշեն:

Հայ եմք. այո:

Բայց՝

Հայ ըլլա՛մք, մանաւանդ.

Ո՛չ սոսկ անուամբ ու արեամբ, ճակտի գիրով կամ ծնողաց որոշումով: Ըլլա՛նք մեզմով, լիովին, զունամառ, ճառագայթաբար, հարազատօրէն, բնաբոյր ծաղիկ նման և ոչ անբոյր ու խառնսիկ արուեստականին պէս, որուն տեսքը երբեմն աւելի հրապուրիչ է, բայց որուն կեանքը՝ անբոյր, հետեւաբար և անիմաստ:

Նիւթական առարկաներու կեղծը սիրելի չէ, բայց կրնայ տանելի ըլլալ: Բայց մարդուն կեղծը անտանելի է, ողբերգական է, հակասառածային է:

Դ

Սիրելի՛ք,

Հիմա դարձէք և դիտեցէք դուք զձեզ, իւրաքանչիւրը՝ ինքզինք իր խիղճի հայելին մէջ, որ այս տարի սրբուեցաւ աշխարհէն հաւաքուած իր փոշիներէն: Ապրիլեան մեր նահատակներու ամսն է, մաքրողական և կենսատու շունչովը: Անհատապէս ինչ որ ենք և մանաւանդ ինչ հանգամանք, դիրք, գերեւ առաքելութիւն որ նշանք տա և չկայ մարդ որ զանոնք չունենայ: — զայն ըլլանք ջինջ բերեղութեամբ և ճշմարտականութեամբ: Մէկը միւսէն տարբեր է, մէկը՝ միւսէն տարբեր ցաղափար: Կրնայ լուսննալ տարբեր գերակատարութեան

կոչուած զգալ, Հակոտակը անբնական պիտի ըլլար: Աստուած ալ բոլոր լեռներն ու դաշտերը, ծովերն ու լիճերը, կենդանիներն ու մարդերը նոյն չափով, նոյն զոյնով, նոյն ձևով չէ ստեղծած:

Բայց մենք որպէս հայ, մանաւանդ սփիւռքեան այս այլացնող պայմաններուն զրեթէ անդիմադրելի ներգործութեան տակ, ունինք հասարակաց, համընդհանուր, միատեսակ ու միազոյն լինելութեան կերպ մը, որ մեր ՀԱՅՈՒԹԻՒՆն է:

Այդ հաւաքական ԵՍ-ՈՒԹԵԱՆ մէջ կը միազանգուին մեր բոլոր ԵՍ-ԵՐԸ, Ապրիլեան նահատակներէն ամէն մէկը միւսէն տարբեր էր՝ նահապետութեան արքին մէջ սրբորէն համբուրուեցան և «մի անձն եղեմ»։ Մենք այսօր մեր կեանքին մէջ «մի անձն լինելոց եմք»:

Եկէք այնպէս ըլլանք ԵՍթանասունամեակէն ետք, որ զալիք սերունդները մեր նորոգեալ կեանքի զալիք տարիներուն տեսնեն ԵՍթանասունամեակին հրաշագործ պայծառակերպութեան ճառագայթները... Աշխարհը մեզի ոչ միայն տոգուելութիւն կը բերէ, այլև բաժանում: Մեր թշնամին մահուան զոյնը ուղեց նետել մեր դէմքերուն: Մեր նահատակներու արիւնը մերժեց այդ զոյնը և իր հարազատ զոյնը կարծես դուռ Տէր-Ջօրեան բոլոր հոգեբուն վրայ, ուրկէ ահա վերընծիւղեցան իրենց համայնական գոյութեան նոր ձիւրեր:

Հիմա «ԱՆԵՐԻՆԻՈՅԹ ԹԵՆԱՄԻՆ» խիւր սարօքն և խիւր շար կամօքն մեզ կը ճգնի հեռացնել իրարմէ: Իրարմէ հեռացնելով, խորքին մէջ, հեռացուցած կ'ըլլայ մեր համայնութենէն, մեր միասնութենէն, առանց որուն հայութիւն չկայ այլ կան հայեր միայն, որոնք սակայն չեն կրնար սուղալ, սրովհետև շղթայի թելէն փրթած օղակներու նման կը տարտղնուին, ի վերջոյ կորսուելու համար: Տարբեր կրնանք ըլլալ իրարմէ, բայց ո՛չ՝ հակադիր իրարու. տարակարծիք կրնանք ըլլալ, բայց ո՛չ՝ թշնամանող իրարու:

Hannibal ad portas Roma

«ԱՆՃԻՐԱՅԻՐ ՀՈՒՍԻ ՂՈՆԵՐՈՒՄ ԱՆՉԵՒ Է ԴԱՍԵՐ»:

Օրհասական վտանգ կայ մեր շուրջ:

Եթէ չենք տեսներ, ափսոս մեզի. կա՛մ կոյր ենք կա՛մ տկարատես կա՛մ շեղատես: Մեր չտեսնելը վտանգին չարիքը չի փարատեր: Զայլամութիւնը ինքնասպանութեան նախաքային է... Բանանք մեր աչքերը, իրարու նայինք և իրարու նայուածքներով զօրացած հայեացքով զննենք և տեսնենք «աներեւոյթ թեմամույն» զաղտագործ նարքները և զո՛ր չերթանք անոնց՝ ինչպէս մեր հայրերը զո՛ր դացին «երեւելի թեմամույն»: Ամէն տեսակի ու չափի պառակտում՝ ուրախութեան քրքիջ է մեր բոլոր թշնամիներուն և տրտմութեան դառն կակիծ՝ մեր նահատակներուն...:

Ե.

ԵՍթանասունամեակի փակումէն առաջ, պարտք զգացի այս սրտաբուխ և խտացեալ խօսքերը հացի աւ աղի պէս ձեզի հետ բաժնելու կը հաւատամ, որ Աստուծոյ շնորհի սրբացնող զօրութեամբ, մեր նահատակներու կտակին ներգործ և հոգեմեղմ խորհրդագործութեամբ, մեր պատմութենէն ժառանգուած փորձութեան լոյս-իմաստութեամբ և մեր ապագայի տեսիլքի և հեռանկարներու

# ԱՍԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

## ԲԵԹՎԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

ԺՌՂՈՎՈՐԴ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՍՓԻՐՍ ԱՇԽԱՐՀԻ

Կը իօսիմ ձեզի աշխարհի ամենամոխրական սրբալայրէն, Բեթղեհէմի մեր Տիրոջ Ծննդեան ալրէն, փոխանցելու քաղցր աւեսիսը այս գիշերուան, որ երկու հազար տարիներ առաջ աշխարհի տրուեցաւ հովիւներու եւ հրեա-  
սակներու բերնով, ծննդեան բոցալառ սասողին ներքեւ :

Յիսուսի Ծնունդը տաւ մը ըլլալէ աւելի փերթուած մըն է, գողցր ու անգամանդաղ, նման ծագող արեալոյսին, որ պէտք չունի ականջը շանթող, միտքը բարուրող եւ երեւակայութիւնը կրակող բառերու . անիկա անսօզ հումարսութիւնն է, մերկ մանուկի մը կերպարանով, պառկած մաուրին խորը :

Յիսուս Աստուծոյ իօսն էր, երկինքէն երկիր իջնող, որպէնզի մարդիկ կարենային լսել իր ձայնը եւ տեսնել իր դէմքը, երկնքի լոյսերով ողողուն : Խորհրդաւոր գիշերուան մը մէջ, երկնքի դուռները կը բացուէին եւ կը ծնէր Սուրբ Բանը, որ մանկան մը մարմինը առած՝ պիտի փնտրէր լոյսի պէս մա-  
քուր կոյսի մը կուրծքին՝ որ ընտելաւ անօրն էր Միածնին : Այս մեծ իրողու-  
թիւնը չէր կրնար իրագործուիլ ոչ բնական օրէնքով, ոչ ալ ազատ կամովը մարդուն, այլ միայն փափաքովը Նախախնամողին :

Մանուկ մըն է այս գիշերուան ծնող Աստուածը, որ կը փոխանայ յար-  
դին վրայ մաուրին, բայց որ պիտի նստի գահուն՝ շինուած գերութեան ծան-  
րութեան ներքեւ կնոյ սիրտերէն եւ իմաստութեան ծարաւ հոգիներէն : Որ պիտի առնէ ուժն ու իմաստութիւնը հնութեան կարծեցեալ աստուածներէն եւ պիտի տայ զայն հովիւին ու ձկնորսին : Պիտի ազատէ զանոնք եւ նմանները օտերու գերութենէն, պիտի նետէ իր հոգիին հունքը սիրտերուն խորը, հոն բուսցնելու համար արեւոյթեան կարմիր ու ներմակ ծաղիկներ, նման մարդոց վերքերուն :

*Քաղցրական ներդրութեամբ պիտի ունենանք քաղութիւնը, պարկեշտութիւնը  
առանձնական ճիշտութիւնի նստելու մեր իսկ անձերուն հետ և Դեկտեմբեր ամիսը  
վերածելու ինքնաբերական կենսութեան մը, որպէսզի զայիք Նոր Տարին  
կարենանք ողջունել որպէս վերածնեալ ազգ՝ մեր*

Հայկեան իմաստութեան զօրացեալ գիտակցութեամբ, և

Հայկական միութեան ամրացեալ վճռակամութեամբը,

*Վասն փառացն Աստուծոյ, Վասն պայծառութեան Սրբոյ Եկեղեցւոյ Հայաս-  
տանեայց և Վասն շինութեան Ազգիս Հայկազնեան :*

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

1 Դեկտեմբեր 1985

Անթիլիաս - Լիբանան